



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

« 10 » սեպտեմբերի 2013թ.

թիվ 481-ՁԿ.

Հ Ր Ա Մ Ա Ն

ՊԱՐԶ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ՏՐՎՈՂ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ ՀԱՅՏԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ
ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածով, <<Լիցենզավորման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ, 23.1-րդ և 25-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի մայիսի 15-ի թիվ 503-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կանոնադրության 12-րդ կետով՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Հաստատել պարզ ընթացակարգով տրվող լիցենզիաների հայտերի քննարկման կարգը՝ համաձայն թիվ 1 հավելվածի:
2. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՆԱԽԱՐԱՐ

Գ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի
2013 թվականի սեպտեմբերի <<10>> թիվ ~~1812~~ հրամանի

Կարգ

Պարզ ընթացակարգով տրվող լիցենզիաների հայտերի քննարկման

1. Սույն կարգով կարգավորվում է <<Լիցենզավորման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով պարզ ընթացակարգով տրվող լիցենզիաների հայտը և փաստաթղթերը հայտատուի կողմից լիցենզավորող մարմին ներկայացնելուց հետո լիցենզավորող մարմնի գործառույթների հետ կապված հարաբերությունները և սահմանվում է պարզ ընթացակարգով տրվող լիցենզիաների հրամանների օրինակելի ձևերը՝ լիցենզիաներ տալու մասին (թիվ 1, թիվ 2 ձևեր), լիցենզիայի հայտի մերժման և ՀՀ ֆինանսների նախարարի հրամանը չեղյալ ճանաչելու մասին (թիվ 3 ձև) և լիցենզիայի հայտի մերժման մասին (թիվ 4 ձև):
2. Պարզ ընթացակարգով լիցենզիայի տրամադրման կամ մերժման մասին որոշման վերաբերյալ տեղեկացումն իրականացվում է հայտատուի կողմից <<Լիցենզավորման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված հայտը և փաստաթղթերը (այսուհետ՝ Հայտ) ներկայացնելուց 16 աշխատանքային ժամվա ընթացքում: Հայտում ոչ էական թերությունների (վրիպակների, ոչ իրավաբանական անճշտությունների, թվաբանական սխալների և նման այլ բացթողումների) առկայության, ինչպես նաև փաստաթղթերը թերի լինելու դեպքում՝ ոչ էական թերությունները վերացնելու կամ թերի փաստաթղթերը ներկայացնելու համար <<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենքով սահմանված ժամկետը լրանալուց 16 աշխատանքային ժամվա ընթացքում:
3. Հայտատուն Հայտը ներկայացնում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն առձեռն կամ փոստով կամ էլեկտրոնային համակարգի միջոցով:
4. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության աշխատակազմի քարտուղարության (այսուհետ՝ Քարտուղարություն) կողմից մուտքագրման (գրանցման) օրը համարվում է Հայտի ներկայացման օր:
5. Քարտուղարության կողմից Հայտն ստանալուց հետո այն անմիջապես <<Mulberry>> համակարգի միջոցով, ինչպես նաև փաստաթղթային, տրամադրվում է Հայաստանի

Հանրապետության ֆինանսների նախարարության աշխատակազմի լիցենզավորման գործակալության պետին (այսուհետ՝ Գործակալության պետ):

6. Գործակալության պետը Հայտն ստանալուց հետո մակագրում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության աշխատակազմի լիցենզավորման գործակալության համապատասխան բաժնի պետին (այսուհետ՝ Բաժնի պետ):

7. Բաժնի պետը Հայտն ստանալուց հետո մակագրում է համապատասխան աշխատակցին (այսուհետ՝ Աշխատակից):

8. Աշխատակիցը, 4 աշխատանքային ժամվա ընթացքում ուսումնասիրում է Հայտը, պատրաստում է լիցենզիա տալու կամ մերժելու մասին հրամանի նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ) և «Mulberry» համակարգի միջոցով ներկայացնում է հաստատման Բաժնի պետին:

9. Բաժնի պետը Նախագիծը ներկայացնում է հաստատման Գործակալության պետին:

10. Գործակալության պետը Նախագիծը ներկայացնում է հաստատման Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության աշխատակազմի ղեկավարին (այսուհետ՝ Աշխատակազմի ղեկավար), միաժամանակ տեղեկացնելով տվյալ ոլորտը համակարգող Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալին:

11. Աշխատակազմի ղեկավարը Նախագիծը ներկայացնում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարին՝ ստորագրման:

12. Ստորագրված հրամանը՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի լիցենզիա տալու կամ մերժելու մասին որոշումը, Աշխատակազմի ղեկավարի կողմից տեղեկացվում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության աշխատակազմի անձնակազմի կառավարման վարչությանը և Գործակալության պետին:

13. Գործակալության պետն ապահովում է 2 աշխատանքային ժամվա ընթացքում հրամանի թղթային տարբերակի ներկայացումը Աշխատակազմի ղեկավարին:

14. Փաստաթղթային հրամանը, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի կողմից ստորագրվելուց հետո, 1 աշխատանքային ժամվա ընթացքում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության աշխատակազմի անձնակազմի կառավարման վարչության կողմից համարակալվում է:

15. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի՝ լիցենզիա տալու կամ մերժելու որոշման մասին, Գործակալության պետի գրությամբ, Քարտուղարության միջոցով պատշաճ ձևով տեղեկացվում է հայտատուին:

16. Հայտատուն լիցենզավորող մարմին պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթ կարող է չներկայացնել: Աշխատակիցը Հայտը բավարարելու մասին որոշումն ընդունվելուց հետո գանձապետական առցանց կառավարման համակարգի կամ պետական վճարումների էլեկտրոնային համակարգի միջոցով հավաստիանում է պետական տուրքի վճարման մասին: Պետական տուրքի վճարում է համարվում համապատասխան հաշվին պետական տուրքի գումարի մուտքագրման օրը:

17. Հայտատուի կողմից լիցենզիայի տրամադրման որոշումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում պետական տուրքը վճարվելու դեպքում նույն (1 աշխատանքային) օրվա ընթացքում տրամադրվում է լիցենզիան:

18. Հայտատուի կողմից լիցենզիայի տրամադրման մասին տեղեկացումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում պետական տուրքը չվճարվելու դեպքում լիցենզավորող մարմնի կողմից կայացվում է որոշում՝ Հայտը մերժելու և լիցենզիայի տրամադրման մասին որոշումը չեղյալ ճանաչելու մասին:

19. Այն դեպքում, երբ Հայտի ներկայացման պահին պետական տուրքը վճարված է, ապա լիցենզիայի տրամադրման մասին որոշման կայացումը և լիցենզիայի տրամադրումն իրականացվում է սույն կարգի դրույթներին համապատասխան՝ 16 աշխատանքային ժամվա ընթացքում:

Հրամանի Օրինակելի ձև
Պարզ ընթացակարգով տրվող լիցենզիաների

ՀՐԱՄԱՆ

<< ՀԱՅՏԱՏՈՒԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ >> ԿԱԶՄԱԿԵՐՊԱ-ԻՐԱՎԱԿԱՆ ՁԵՎԸ
ԼԻՑԵՆԶԻԱ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Լիցենզավորման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածը և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի սեպտեմբերի 24-ի թիվ 895 որոշման 2-րդ կետը՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. <<Հայտատուի անվանումը>> կազմակերպա-իրավական ձևը տալ <<լիցենզիաի անվանումը>> լիցենզիա:
2. Սույն հրամանը կարող է բողոքարկվել վարչական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից վեց ամսվա ընթացքում կամ դատական կարգով՝ օրենքով սահմանված ժամկետներում:

ՆԱԽԱՐԱՐ

Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հրամանի Օրինակելի ձև
Պարզ ընթացակարգով տրվող լիցենզիաների

ՀՐԱՄԱՆ

<< ՀԱՅՏԱՏՈՒԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ >> ԿԱԶՄԱԿԵՐՊԱ-ԻՐԱՎԱԿԱՆ ՁԵՎԸ

ԼԻՑԵՆԶԻԱ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Լիցենզավորման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածը և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի սեպտեմբերի 24-ի թիվ 895 որոշման 2-րդ կետը՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. <<Հայտատուի անվանումը>> կազմակերպա-իրավական ձևը գործունության իրականացման վայրը վայրում տալ <<լիցենզիայի անվանումը>> լիցենզիա:
2. Սույն հրամանը կարող է բողոքարկվել վարչական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից վեց ամսվա ընթացքում կամ դատական կարգով՝ օրենքով սահմանված ժամկետներում:

ՆԱԽԱՐԱՐ

Գ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հրամանի Օրինակելի ձև

Պարզ ընթացակարգով տրվող լիցենզիաների

ՀՐԱՄԱՆ

<< ՀԱՅՏԱՏՈՒԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ >> ԿԱԶՄԱԿԵՐՊԱ-ԻՐԱՎԱԿԱՆ ՁԵՎԸ

ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՀԱՅՏԻ ՄԵՐԺՄԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ _____ ԹՎԱԿԱՆԻ _____-Ի ԹԻՎ _____ ՀՐԱՄԱՆԸ

ՉԵՂՅԱԼ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Լիցենզավորման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը, նույն հոդվածի 3-րդ մասը, 23.1-րդ հոդվածը, ինչպես նաև հաշվի առնելով, որ ՀՀ ֆինանսների նախարարության ___ թվականի _____ -ի թիվ _____ գրությամբ <<Հայտատուի անվանումը>> կազմակերպա-իրավական ձևը ծանուցվել է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի ___ թվականի _____ -ի թիվ _____ հրամանի մասին, ինչպես նաև տեղեկացվել է <<Լիցենզավորման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 23.1-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն լիցենզիայի տրման համար օրենքով սահմանված պետական տուրքի գումարի վճարման ժամկետների մասին և նույն հոդվածի 4-րդ կետի համաձայն, լիցենզիայի տրման համար օրենքով սահմանված ժամկետում պետական տուրքը չվճարելու դեպքում լիցենզիայի հայտի մերժման մասին, սակայն Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունում առկա պետական տուրքի վճարումների էլեկտրոնային համակարգում պարունակվող տեղեկատվության համաձայն <<Հայտատուի անվանումը>> կազմակերպա-իրավական ձևը ___ թվականի _____-ի դրությամբ չի վճարել <<Լիցենզիայի անվանումը>> լիցենզիայի համար օրենքով սահմանված պետական տուրքի գումարը՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. <<Հայտատուի անվանումը>> կազմակերպա-իրավական ձևը կողմից _____ թվականի _____ -ին ներկայացված <<Լիցենզիայի անվանումը>> լիցենզիայի հայտը մերժել՝ <<Լիցենզավորման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 23.1-րդ հոդվածի

2-րդ մասով սահմանված կարգով լիցենզիայի տրման համար պետական տուրքի գումարը չվճարելու հիմքով:

2. ՀՀ ֆինանսների նախարարի _____ թվականի _____ -ի <<Հայտատուի անվանումը>> կազմակերպա-իրավական ձևը լիցենզիա տալու մասին>> թիվ _____ հրամանը չեղյալ ճանաչել՝ համաձայն <<Լիցենզավորման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 23.1-րդ հոդվածի 4-րդ մասի:

3. Սույն հրամանը կարող է բողոքարկվել վարչական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից վեց ամսվա ընթացքում կամ դատական կարգով՝ օրենքով սահմանված ժամկետներում:

ՆԱԽԱՐԱՐ

Գ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հրամանի Օրինակելի ձև
Պարզ ընթացակարգով տրվող լիցենզիաների

ՀՐԱՄԱՆ

<< ՀԱՅՏԱՏՈՒԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ >> ԿԱԶՄԱԿԵՐՊԱ-ԻՐԱՎԱԿԱՆ ՁԵՎԸ
ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՀԱՅՏԻ ՄԵՐԺՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Լիցենզավորման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածը, ինչպես նաև մերժման հիմքը՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. <<Հայտատուի անվանումը>> կազմակերպա-իրավական ձևը լիցենզիա ստանալու համար _____ թվականի _____ -ին Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ներկայացված հայտը մերժել հետևյալ հիմքով՝

Մերժման հիմքը

2. Սույն հրամանը կարող է բողոքարկվել վարչական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից վեց ամսվա ընթացքում կամ դատական կարգով՝ օրենքով սահմանված ժամկետներում:

ՆԱԽԱՐԱՐ

Դ. ՍԱՐԳՍՅԱՆ